ւառապետի մօտ, որ գոռում է նրանց վրայ. «Ա՜յ դու անզգամ մյ... տեսնեմ էք՝ ուզում էն ապստամբուել. ես գիտեմ թէ դուք ովքեր էք, սպասեցէք, ես ձեզ ցոյց կըտամ. բոլորիդ էլ առանձին-առանձին կը քերթեմ»... (էջ 25). «Քաշ տուէ՛ք այս անզգամին և ճիպոտի երեսուն հարուած հասցրէք. իսկ յետոյ երկուսին էլ բանտարկեցէք» (էջ 26)։

Տնտեսապէս ընկճուած, գետնի հետ հաւասարուած Գոգիան ֆիզիքական պատիժ ստանալու բարոյական անպատուութեանը չկարողանալով դիմանալ անձնասպանութիւն է գործում և նրա հրացանազարկ դիակն էլ թաւալւում է ղազախների ձեռքով սպանուած նրա հաւատարիմ շան մարմնի մօտ։ Խեղճ Մարինէն կորցնում է հոգեկան կարողութիւնը, խելագարւում է անմիջապէս և դանակը ձեռքին իւր հարազատ զաւակների յետեւից է ընկնում, որ նրանց մորթի, որովհետև «երէկ գիշեր երկնքից իջաւ ս. Բարսեղը, ասաց, որ աշխարհը պիտի կործանուի ու փախաւ»։ (էջ 39)։

Գօգիայի տունը աւերակ էր դարձել, միայն տան պատերըն էին կանգուն մնացել. ատնիքը վաղուց փտել ու քանդուել էր»։ (էջ 40).

Իրակա՞ն է արդեօք Նինօշվիլիի այս ողբերգական պատկերը—Թող ընթերցողն եզրակացնէ...։ ԲՐԻՋ

---

## ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Ա. Տ. Տ. Դիմակներ. երգիծական արկածներ. (արտատպութիւն «Լումայից» և ուրիշ տեղերից). Թաւրիզ, 1905 (50 կ.)։
Է. ՆԻՆՕՇՎԻԼԻ. Գօգիա Ուիշվիլի. Թարգմ. Ղ. Կ. Թիֆլիս 1905 (8 կ.)
Հ. ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑ. Խաչատուր Աբովեանց. հրատ. Լևոն Ցովսէփեանի. Թիֆլիս 1905 (5 կ.)
ԱՐՇԱԿ ԱԹԱՅԵԱՆ. Սիրոյ հովիտը. հրատ. Թիֆլ. Հր. Ընկ. Թիֆլիս 1904 (3 կ.)
Վ. ՓԱՓԱԶԵԱՆ. Վիշապ և Ուրիշ զրոյցներ. հրատ. նոյն. Թիֆլիս 1904 (5 կ.)։ Երկու Թռչուն. հրատ. նոյն. Թիֆլիս 1905 (3 կ.)
ՄԵԼԻՔ ԵՍԱՅԵԱՆ. Երազ. հրատ. նոյն. Թիֆլիս 1905 (3 կ.) Մի բուլի... հրատ. նոյն. Թիֆլիս 1905 (3 կ.)
Ա. ԼԷՇԿԷ. Ուսման սէր. Թարգմ. ռուս. հրատ Տիկին Զաբելի. Ս. Պ. Բ. 1905 (7 կ.)
Մ. ՍԵՐԱՕ. Մանկան մօտ. վերջին խօսք. հրատ. նոյն. Ս. Պ. Բ. 1905 (7 կ.)
А. С. ДАГБАШЬЯНЪ. Польный русско-армянскій словарь. вып. IV, V, VI и VII. Тифлисъ 1904